


յիշուում, որոնք Ափրատեանց են յայտնի, այլ նաև վանքեր, վանականներ (Mönch) և կոյսեր և այն էլ իբր քրիստոնէից վարուց յայտնի մի դասակարգ, որ աշխարհականներին և հոգեւորականներին մէջ տեղ են բռնում, և որովհետեւ այս վերջարանի հիման վրայ չի կարելի ամբողջ վանականութեան պատմութիւնը յեղաշրջել, այս պատճառով զըուածքս ամենական—էը 4-րդ դասը— վերջինի կարող էի գրուել: Այնտեղիս մասից 5 որ յետոյ, գրուած լինելը զիտաւորեալ սուտ՝ այսինքն ինչքէն է:

Այս վերջարանը՝ որ երկիս նկատմամբ այսքան մեծ նշանակութիւն ունի, պակասում է վկայարանութեանս հայերէն և յունարէն թարգմանութեան մէջ և այս հանգամանքը տանում է մեզ՝ բնագրի թարգմանութեանց յարարեութեան խնդրին: Հայերէնը ընդհանուր առմամբ բնագրի բառացի թարգմանութիւն է, թէպէտ և տեղ տեղ յաւելումներով և յապաւումներով, որ յատուկ են բոլոր վկայարանութեանց և արդիւնք իրական գործածութեան: Չնայելով որ յունարէն թարգմանութիւնը աւելի ազատ է, բայց աւելի նման է բնագրին, քան նոյն Արմենիկ Մետափրատեոսի միջոցով խմբագրուած Հարիբի վկայարանութիւնը իւր իսկականին: Ապա յօգուածիս հեղինակը հայերէն յունարէն և ասորերէն բնագրիների համեմատութիւնն է անում և ցոյց է տալիս մի քանի յատուկ անուանց և բառերի տարբերութիւններ, յանդիմանում է բնագրի հրատարակիչ պատրիարքին, որ նա ասորական բնագրերի համեմատութեան հոգս չէ տարել և ապա լատիներէն թարգմանութեան մի քանի սխալներն է ուղղում, և իւր այս վերին աստիճանի հետաքրքրական յօդուածը վերջացնում է մի հաշեացք ձգելով զիսնական Ասահմանի հրատարակութեան յառաջարանի վրայ, ուր նա Միքայէլ Ասորու ժամանակագրութեան համաձայն, որը ինքն է գտել և շուտով Շաբօն (Chabot) պէտք է հրատարակէ, աւանդութիւնը պաշտպանում է Տիքարթօնի և Գիւլստի յարձակումների դէմ:

Ե. Թօփման.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԴԱՍՈՒԹԻՒՆ ԷՆ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Շարունակութիւն) \*

Ը.

Տ Ի Գ Ր Ա Ն Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը.

«Հիւսումն պիտոյից».—«Չորս հազներգութիւնը».—Տեսնենք ինչպիսի աղբիւրներ է յիշատակում մեր պատմագիրը ԺԹ. գլխի մէջ: Այստեղ յայտնում է, որ իւր առաջին գրքի մէջ (ի գիրս յայտնի) պիտի յարմարելով կարգէ զամենայն... զազգիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս և նոցա մասին եղած պատմութիւնները, ոչ թէ իրենից սարքելով, այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեաց ապա եւ որ ինչ ի քանից արանց իմաստնոց և յայտնիք քաջախոհակաց: Այնուհետեւ յայտնում է, որ ինքն իւր կողմից արդարաբան պիտի լինի, և եթէ սխալ անէ՝ մեղքն իրենը չէ, այլ իւր աղբիւրներինը: Բայց իւր գրածի ճշմարտութեան մի ապացոյց է համարում «զուգութիւն բարբառոյ (իւր աղբիւրների ?) և հաւասարութիւն թուոյ կարգի (ցանկի) պատանեաց» [մերոց տրանց, անշուշտ, երբայական ցանկի հետ]: Եւ ապա պատմագիրն իւր աղբիւրների այսպիսի ընդհանուր յիշատակութիւնից յետոյ՝ աւելացնում է. «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, ... սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութեան պիտոյից»: Այս հատուածը բառացի նշանակում է. «Այս (անունների կարգն իրենց ծանօթութիւններով) այսպէս կարգելուց յետոյ, պիտի սկսեմ (կարգել կամ պատմել) քեզ սոցանից յետոյ եղածները պիտոյից հիւսման պատմութիւնից» (առնելով): Չնայելով որ Մորենացու լեզուն այստեղ շատ

\* Տես Արտաս համար Ը. և թ. ևր. 415:

1. «Հաւասարութիւն բոլոր կարգի պատմեաց» իրօք գտնում ենք ԺԹ. գլխի երայցեցոց և Բայցոց ցանկի անունների մէջ:

պարզ է, բայց և այնպէս հ. Ստեփանէն այդ հատուածը թարգմանած է. «Այս այսպէս կարգելով... կրակսեմ քեզ պատմել այնուհետեւ եղածները պատմական կարգով»: Պատմել «ի հիւսման պատմութենէ պիտոյից» ոչ մի կերպ կարելի չէ հասկանալ պատմել «պատմական կարգով»: Բացառական հոլովը «ի պատմութենէ» (որի նախդիրը նախագաս յատկացուցչի վրայ է գրած) շատ որոշ ցոյց է տալիս որ այստեղ մի աղբիւրի յիշատակութիւնն է անում պատմագիրը ինչպէս և վերևում գնում է նոյն հոլովով «ի գրոց», «ի բանից արանց իմաստնոց»: Ուրեմն պատմագիրն ասում է թէ այս կամ այն աղբիւրից առնելով պիտի կարգէ մեր նախնիքների անուններն ու նոցա մասին եղած գրոյցները և ապա պիտի սկսէ պատմել մի գրքից որ կոչուած է «պատմութիւն հիւսման պիտոյից» կամ «հիւսումն պիտոյից»: Ահա մի մասնաւոր աղբիւրի յիշատակութիւն, որի վրայ ուշադրութիւն չեն դարձրել յորեհնացու քննադատները:

Սորենացու պատմութեան օր մասն է այդ աղբիւրից առած: Եթէ «այսոցիկ այսպէս կարգելոց» խօսքի տակ հասկանանք թէ ԺԹ. զլիի մէջ կարգուածները և թէ այնուհետեւ եկող երեք զլուխները որոնցից ԻԲ. զլուխն է «կարգ թագաւորաց մերոց»... այն ժամանակ պէտք է ընդունել որ այդ աղբիւրը վերաբերում է Տիրանի պատմութեանը՝ քանի որ սորանից յետոյ այլ ևս պատմութիւն չկայ այլ լոկ անուններ են, որոնցից երեքը ինչպէս տեսանք, հաւանորէն, Մար Արախից է առած, իսկ վահագնի մասին գրածն իւր ակնշնով լսած երգից: Իսկ եթէ այդ «այսոցիկ այսպէս կարգելոց» խօսքի տակ հասկանանք միայն ԺԹ. զլիի մէջ կարգած անուններն ու գրոյցները, այն ժամանակ պէտք էր կարծել թէ այդ «հիւսումն պիտոյից» կոչած գիրքն իբրև աղբիւր ծառայել է նաև յաջորդ Ի. զլիի պատմութեան համար. «վասն Արայեան Արայի և թէ սորա որդի Անուշաւան, որ Սօս անուանիւր»: Սակայն այդպէս հասկանալ կարելի չէ: Պատմագիրը պարզապէս ասում է թէ պիտի սկսէ պատմել «որ ինչ զլիի այսոցիկ» այսինքն իւր արդէն կարգած անձերից յետոյ կատա-

րուածները 1, Իսկ Ի. զլիի պատմութիւնը ոչ թէ ԺԹ. զլիի մէջ կարգածներից յետոյ եկողների մի պատմութիւն է, այլ նոյն ԺԹ. զլիի մէջ կարգած առաջին երկու անունին է վերաբերում: Այսպէս հասկանալով ուրեմն այդ «հիւսումն պիտոյից» կոչուած աղբիւրից առած պատմութիւնը պիտի որոնենք ոչ առաջ քան ԻԱ. զլուխը. ասել է Պարոյրի և միւս հայկազն թագաւորների մասին գրածների մէջ:

Եւ այստեղ ահա մենք գտնում ենք դարձեալ մի մասնաւոր աղբիւրի յիշատակութիւն, որ մէջ կրքերենք Ա. տեսակի ձեռագիրներից: Եւ այժմ ահա զուարճացայց ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք 2 ի թագաւորութեան հասանն յաստիճան, վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ զործ կատարել եւ քազումս ասել առարկութիւնս 3 քանից 4. զորոյ 5 մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հազներգութիւնս զարգասաւորին ի քանս և զիմաստնոյն և ի մէջ իմաստնոց իմաստնագունի (Ա. իա):

Ի՞նչ է ասում այստեղ պատմագիրը: Ես նախընթաց զլիի վերջում և այս զլիի սկզբում յայտնում է թէ պիտի թողնէ Ասորեստանցոց թագաւորութեան ժամանակ եղած հայոց աւագադոյն մարդոց ոչ կարևոր գործերը 6, և ապա ուրախութեամբ յիշելով

1. Հմեմ. Բ. հե. «իսկ որ ի մէջ զլիի մասնուսն նորսովու ... պատմե՛ սոցոց համարելով՝ երկրորդեմք»:  
 2. Այս սերունդի բառը պակասում է Ա. մեռագիրների մէջ. մենք Տպագրից եմք ստեղծած: Տպագիրն այս հասուածի մէջ շատ աղաւաղուած է:  
 3. Առարկութիւնս բառի նշանակութեան համար հմեմ. Բ. ժգ. «եւ դարձեալ պատմի առարկութիւնն Կիլիկեայ եւ Եփեսոսերայ»:  
 4. Տպագրի մէջ՝ առարկութեան ձև ու ից:  
 5. Տպագրի մէջ յոգնակի «գորոց», որ շարաբերում է յոգնակի բառով դրած «քազումս առարկութիւնս քանից (ձևոյց) իսովին և սպա կրկնած է՝ ինչպէս յաճախ՝ այսպիսեաց քանից»:  
 6. «Այլ կարի շատ լինի, յի գամնեայն՝ որ ի մէջ արժան է՝ սպիցեմք ի ձառիս (այս զլիի մէջ) զնախապարզելոց (վերելում ԺԹ. զլիի ցանկի մէջ դրած) առանց զրանս և զգործս»: «Թողով զու կարեւորացանս ի քանից ստացուով որ ի մէջ հարկաւորն է» (Ա. ի. իա):

որ Հայկի սերունդները թագաւորութեան են հասնում: այդ պատճառով (վասն որոյ) արժան է համարում կարճ չկապել, ինչպէս վերելում այլ երկար գրել, կամ իւր խօսքով «մեծ գործ կատարել և բազումս ասել առարկութիւնս բանից» (Ճառից): շատ պատմութիւններ անել:

Արդ, որոնք են այդ թագաւորների մասին գրելու արժան համարած «մեծ գործն» ու «շատ պատմութիւնը»: Վարբակի և Պարոյրի համար պատմածի մէջ միայն տեսնել չենք կարող այդ «մեծ գործն» ու «շատ պատմութիւնները»: Այդ պատմութիւնն ընդամենը մի տասնութ տողով է անցած, որից մեր Պարոյրին միայն երկու երեք տող են վերաբերում: «Թինքն և զքանչն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձե և շուք խոստանալով նմա»: Ասել թէ թողնում է Ասորեստանցոց ժամանակի աւագագոյն մարդոց ոչ կարևոր պատմութիւնները և թէ որովհետեւ Հայկի սերունդները թագաւորութեան են հասնում ուստի արժան է համարում մեծ գործ կատարել և շատ բաներ գրել—և այնուհետեւ գրել միայն տասնութ տող, և հայոց մասին իսկապէս երկու երեք տող: Այսպէս հասկանալ կարելի չէ, ինչպէս անում են Պորենացու քննադատները:

Այսպէս ուրեմն այդ գրելու արժան համարած «մեծ գործն» ու «շատ պատմութիւնները» պէտք է տեսնել ոչ միայն Պարոյրի, ինչպէս անում են ուրիշները, այլ հայկազանց բոլոր թագաւորների պատմութեան մէջ, որոնց «սիրելի», «բնիկք և արեան առուք և հաւաստի հարազատք» է անուանում և որոնց մէջ իսկապէս մի միայն Տիգրանի պատմութիւնն է անում<sup>1</sup>:

Ուրիշ ոչ մի կերպ կարելի չէ հասկանալ պատմագրի խօսքը թէ հայկազանց թագաւորների համար «մեծ գործ» պիտի կատարէ և «շատ բաներ» պատմէ<sup>2</sup>:

Սակայն այս Պորենացու խօսքերի մի կողմն է միայն: Նա պարզաբար յիշում է նաև որ այդ «մեծ գործի» «հիմունքը» կարգացել է մի հեղինակի «Չորս հազներգութիւնների» մէջ, որին այնքան գովում է ինքը: Թէ այդ հեղինակը Մար Արաս չէ, այդ մասին խօսք անգամ լինել չէ կարող (Հմմտ. Միարան, Պոր. Պատմ. Ուս. եր. 74): Այդ «սորգասաւորն ի բանս» մեր պատմագրի ժամանակ շատ յայտնի մի հեղինակ պիտի եղած լինի և հանրածանօթ, և ծանօթ նոյն իսկ Սահակ Բագրատունուն, որ պատմագիրը նորանունը չէ տալիս:

Հերոզոտի կամ Դիոդոր Սիկիլիացու մէջ որոնել այդ «Չորս հազներգութեանց» հեղինակին, ինչպէս անում է շնորհ. Միարան, լոկ ենթադրութիւններ են: Ինչու պէտք է իւր «մեծ գործի» և «շատ պատմութիւնների» համար իբրև աղբիւր յիշէր Դիոդորին, եթէ սորա գրուածների մէջ, նոյն իսկ շնորհ. Միարանի կարծիքով հաւանօրէն չկար Պարոյրի մասին անգամ որևէ յիշատակութիւն էլ չենք ասում Տիգրանի մասին:

Արդարև «հիմունք» բառը մտածելու տեղիք է տալիս, բայց կարելի չէ հակառակ Պորենացու ասածին՝ այդ բառից եզրակացնել, որ «Չորս հազներգութեանց» մէջ «Պորենացին չէ կարգացել Պարոյր—Վարբակի բուն պատմութիւնը, այլ միայն հիմունք, այսինքն այնպիսի բան, որ երաշխաւորում էր Պարոյր—Վարբակի պատմական գոյութեանը»:

Սակայն այդ վկայութիւնն, ինչպէս տեսանք, այստեղ միայն Պարոյրի և Վարբակի պատմութեան մասին չէ, ինչպէս ընդունել են մինչև այժմ, այլ հայկազանց թագաւորների մասին ընդհանրապէս: Ապա բռնապրօս բացատրութիւն է ասել թէ մի որևէ մարդու պատմութեան հիմունքն այս կամ այն հեղինակի գրուածի մէջ կարգացած լինել նշանակում է այնպիսի բան կարգացած լինել, «որ երաշխաւորում է այդ մարդու պատմական գոյութեանը»: Եթէ ևս այսօր ասեմ թէ լմ գրած այս ինչ պատմութեան, օրինակ Գեորգ Գ.

1. Այդ «շատ պատմութիւններից» պիտի է դուրս գնել անշուշտ Ի. Գ. Գրոյիսը՝ Սեկեկերիսի որոցց մասին, որ պատմագիրը մտացած լինելով իւր «եղաւթ անն» այստեղ, Մար Արասից անելով, միշտակաւ է ղնում, ընդհատելով հայկազանց բագուտների պատմութիւնը:

2. Հ. Սեկեյանեկն այդ նասուածքը քարգնանում է.

«Ուստի մեկն այստեղ մեծ գործ պիտի կատարեմք ևս պատմեմք շատ իրողութիւններ»:

մեծագործ կաթողիկոսի կենսագրութեան, հիմունքը կարգացել եմ այս ինչ հեղինակի այս ինչ գրուածքի մէջ, մի՞թէ այդ կընշանակէ թէ ես այդ հեղինակի այդ գրուածքի մէջ Գեորգ կաթողիկոսի «բուն պատմութիւնը» չեմ կարգացել, այլ այնպիսի բան, որ «երաշխաւորում է» Գեորգ կաթողիկոսի «պատմական գոյութեանը»: Պարզ հայերէն լեզուով այդ կընշանակէ, որ իմ գրած պատմութեան, կամ կենսագրութեան հիմունքը, հիմնական, էական մասը կարգացել եմ այդ հեղինակի գրուածի մէջ, — ուստի և վերցրել նորանից, — բայց իմ գրած պատմութեան միակ աղբիւրը չէ եղել այդ գրուածքը, այլ ունեցել եմ և ուրիշ աղբիւրներ:

Այսպէս և երբ Խորենացին գրում է թէ իւր գրիչիք «մեծ գործի», «շաա պատմութիւնների», այսինքն հայկազանց թագաւորների պատմութեան «հիմունքը» կարգացել է «Չորս հագներգութեանց» մէջ, նա ուղում է ասել թէ իւր գրած պատմութեան հիմնական, էական մասը կարգացել, ուստի և վերցրել է այդ գրքից: Բայց այդ գեռ չէ նշանակում, որ նա իւր պատմութիւնն ամբողջ այդ գրքից է առել: Հիմնական մասն՝ այն, բայց և ուրիշ աղբիւր է ունեցել այդ պատմութեան համար: Եւ եթէ մի փոքր ուշադրութիւն դարձնենք, կըտեսնենք, որ այդպէս է և այդպէս էլ վարում է մեր պատմագիրը: Ծա իւր հայկազանց թագաւորների համար ունի մէկից աւելի աղբիւրներ, առնուազն երեք աղբիւր:

Ծախ Մար Աբասը: Մենք տեսանք, որ Մար Աբասի (որից վերցնում է Անանուն) մէջ կայ Ասորեստանցիների իշխանութիւնից յետոյ Հայկի սերնդից իշխողների պատմութիւն: Այդ գիտէ Խորենացին և նա Մար Աբասից է առնում Ծարուգոզոսոսորի ժամանակակից հայկազն Փառնաւազի անունն ու պատմութիւնը:

Նրկորգ աղբիւրն է «Չորս հագներգութիւնը», որից առնում է Խորենացին իւր հայկազանց թագաւորների պատմութեան հիմնական մասը: Այդ իսկ պատճառով Խորենացու պատմութիւնը տարբերում է Մար Աբասից (Անանուն): Այդ տարբերութիւնը տեսել ենք վերևում:

Նրբորգ աղբիւրն է՝ ժողովրդական երգը վաճազնի համար:

Ապա, Պարոյրի պատմութիւնն անելուց յետոյ՝ աւելացնում է մեր պատմագիրը. «Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի, մի՞ ինչ սքանչանար»<sup>1</sup>: Եթէ այս ակնարկութիւնը Մար Աբասի համար չընդունենք, ուրեմն և մի շորորդ աղբիւր էլ է ունեցել՝ զոնէ հայկազանց թագաւորութեան սկզբնաւորութեան և Պարոյրի համար, զի ինդիրն այստեղ այդ մասին է:

Ահա ձեզ երեք — չորս աղբիւր հայկազանց թագաւորութեան պատմութեան համար. աղբիւրներ, որոնց մէջ նոյն պատմութիւնն «այլազգաբար» է պատմուած, այլազգաբար թէ անունների և թէ թագաւորութեան ժամանակի նկատմամբ: Ի՞նչ պիտի անէր խոհուն և դատող պատմագիրը: Անշուշտ, նա պէտք է բացատրէր թէ ինչից է առաջացած նոյն պատմութեան այդպէս «այլազգաբար» լինելը, և ապա որեւէ կռադատութեամբ, — ի հարկ է ամեն իւր հասկացողութեամբ, — պիտի ընտրութիւն անէր իւր «այլազգ» աղբիւրների մէջ, մէկն առնէր, միւսը թողնէր: Եւ Խորենացին այդպէս էլ անում է անմիջապէս նոյն գլխի վերջում և յաջորդ (ԻԲ) գլխի սկզբում, հայոց թագաւորների «կարգը կանոնելուց» առաջ:

Ծա ասում է. մինչդեռ ուրիշ աղբերի թագաւորների գործերը գրուեցան «յիւրեանցըն յիշողութեանցն վերակացուաց», մերոնք՝ անխմատասէր բարք ունենալով՝ այդպիսի բան անել չտուին: Ուստի և նոցա գործերը «մնացին նշանակեալ ի վերջինսն»: Ուրիշ խօսքով մեր թագաւորների ժամանակակիցները չեն գրել նոցա գործերը, այլ՝ ժամանակով շատ հեռու մարդիկ, վերջինն են գրել այդ պատմութիւնները, ուստի և տարբեր կամ այլազգաբար պատմութիւններ են անում:

Բայց ընթերցողի մտքում կըծնուի իսկոյն մի հարց. եթէ ժամանակակիցները չեն գրել, այլ վերջինքն, յետնազոյն ժամանակի մարդիկ, ո՞րքա որտեղից պիտի գիտենային այդ պատմութիւնը: Այս էլ մտածում է մեր

1. Ա. մն. զարմանաւ:

պատմագիրքը, ուստի՝ և անմիջապէս կցում է իւր բացատրութեանը. Ապա թէ ասիցես, ուստի մեզ զնանկեաց մերոց գիտել զանուանս այսպէս, իսկ զբազմաց և զգործս<sup>1</sup>, ասեմք ի Հնոցն գիւանաց քաղզէացոց, ասորեստանեաց և պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակարաց և վերականգնուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց»:

Արդ այդ «վերջին» (յեանագոյն) գրողներից մէկն է Հենց Մար Աբաս որ՝ ըստ Խորենացու՝ Նինուէի արքունի գիւանի մի մտանանից, որի մէջ իբր եղել են Հնոց և նախնեաց պատմութիւններ, մեր ազգի պատմութիւնը քաղել հանել է<sup>2</sup>, Բայց այդ մտանանը հայոց պատմութիւնը խօ՞ւ ամբողջութեամբ չունէր սկզբից մինչև վերջը բոլոր ծշտութեամբ: Ուստի և Մար Աբասի գրածն էլ պակասաւոր մի բան պիտի լինէր. թէ չէ ինչո՞ւ այն փամփանակ պիտի գրէր Խորենացին. «Մի՞թէ մատեան մե՞րձ կայցէ ինձ ... որով ... վերուստ ի քեզ իջուցանեմ անսխալ»: Դա մի աղբիւրից քաղած պատմութիւն էր միայն: Ուրիշ վերջիններ էլ ուրիշ աղբիւրներ գործածելով կարող էին քաղել և կազմել «այլազօրար» հայոց պատմութիւն: Այդպիսի վերջին գրողներից է և «Չորս հազներգութեանց» հեղինակը: Եւ եթէ մենք այժմ՝ յունական ու լատինական աղբիւրներից՝ օգտուելով յաճախ իրար հակասող ու «այլազգ» հայոց պատմութիւն ենք կազմում և դեռ մեր թաղաւորների անունների ցանկը չենք կազմել ծշտութեամբ — ինչո՞ւ ուրեմն Խորենացու աղբիւրները, որոնք նոյն ձևով զանազան աղբիւրներ գործածելով<sup>3</sup> կազմել էին հայոց պատմու-

թիւն, իրար չպիտի հակասէին թէ անուններով և անոնց շարքերով և թէ իրողութիւններով:

Այսպէս, շատ պարզ ու խելացի է Խորենացու բացատրութիւնը, թէ ինչո՞ւ իւր աղբիւրները, որոնք վերջնոց գործ են, հակասական են և այլազգարար: Մենք ևս ուրիշ տեսակ բացատրութիւն տալ չէինք կարող: Եւ այնուհետեւ արդէն յաջորդ գլխի մէջ, իւր անձնական զգացումները յայտնելուց յետոյ, նախ քան թաղաւորների «կարգը» դնելը, բացատրում է թէ ինչպէս է ընտրութիւն անում իւր աղբիւրների մէջ և ինչո՞ւ մէկին աւելի հաւատ է ընծայում քան միւսին:

Մինչդեռ Մար Աբաս (Անանուն) հայոց իշխանութիւնը վերջացնում է Նարուզոպոտասորի օրով և այնուհետեւ հայերին ենթարկել է տալի Բարեկացոց ու Մարաց, Խորենա-

խոսքացոց, ասորեստանաց ու պարսից աղբիւրներ են գործածել, թէ միայն յունական աղբիւրներ ևս Ասուածաշունչ, և այնպէս են ներկայացրել, որ իբր ստալին աղբիւրներից են օգտուել: Նկատեմք ևս այս: Կարելի չէ Ապսերկ ասիցես, ուստի մեզ գնախնեացն մերոց գիտել (կամ զտանել) զանուանս ... խօսից եզրակացնել թէ իբր Խորենացին ասում է թէ ինքն է անունը խոսքացոց, ասորեստանաց ու պարսից աղբիւրներից (Կարագ. Բ. պ. 2. Ա. եր. 184): Խորենացին միշտ ասում է, որ ինքը յունարկեից է անունը: Իսկ երկ Լորս աղբիւրների մէջ ասած է եղել թէ պատմութիւնն ասած է վերոյիշեալ խոսքիական էլն աղբիւրներից, ինքը Խորենացին էլ, փոխանակ գրելու ... «ուստի վերջնոցն (պատմագրաց, որ իբր աղբիւրներն են) զնախնեացն մերոց գիտել զանուանս ... կարող եր գրել «ուստի մեզ ... գիտել»: Որովհետեւ ինքն էլ թէպէտ և վերջնոց մտնով խոսքացոց, ասորեստանաց գրածներից իմացած է համարում իրեն: Այսպէս և յաճախ ևս յիշում է աղբիւրներ, որոնցից անմիջապէս չէ օգտուել, այլ Եւսեթիոսի միտնով, բայց վերջինիս անունը չէ տալիս ևս համարում է թէ բուն աղբիւրից է ասած ինքը: Մի բան որ այժմ էլ շատերը անում են, մտանաւանց մեր լրագրողները ուսուց քերթերից խոսքով, զերմանական կամ ժրանսխական քերթերի անուններն են դնում, որովհետեւ սոքա են իբրեւ աղբիւր ծառայել ուսուց քերթերին: Այսպէս Յովհաննէս կարուղիկոսն էլ, որ Խորենացոց է անունը, այնպէս է դնում, որ իբր թէ ինքն է խոսքիական էլն աղբիւրներից օգտուողը, «Եւ այսօր անուանեմ և գրոյց թէ կարցեալ չին՝ յորմէ գոյ գիտել, զիտացե զի խոսքացոց մտանաւանց մեզ ընծանեցան, որք կամ է նիւնուէ և յեղեւթս առ Տրերի գրեալ» (Մոսկվա, 1853, եր. 14):

1. Ա. մեռ. իսկ Տպագիրն ունի. Ապսերկ ասիցեն ուստի մեզ գնախնեացն մերոց բազմաց այսպէս զտանել զանուանս ևս զգործս ...  
 2. Խորենացու խօսքն այնպէս պէտք չէ հասկանալ, թէ այդ «ուստի» մէջ հայոց պատմութիւնն ասանմին եր գրուած, այլ թէ հայոց մտանան յիշատակութիւններ կային այդ գրքի մէջ և այդ յիշատակութիւններից օգտուելով, քաղելով կամ զմեղ է Մար Աբասու հայոց պատմութիւնը ինչպէս մեք այժմ յունական ու Լատինական աղբիւրներից հանում ենք հայոց բազմաւորների անուններն ու պատմութիւնները:  
 3. Այլ խնդիր է, թէ այդ «վերջինն» իսկապէս

ցու միւս աղբիւրի մէջ հայերն անկախ թագաւորութիւն ունին և Մարաց ու Պարսից ժամանակ Այս վերջինիս ճշմարտութեան համար վկայ ունի ս. Գրքը: «Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն: Վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր: հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. Հրաման տուր: սուչ այրարանն թագաւորութեանն և Աքաճնագեան զնդին: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ:» աւելացնում է մեր պատմագիրը՝ որի համար, գիտենք, երկու տարբեր պատմաւածքներից ճշմարտան այն է, որ համեմատ է ս. Գրքին (Տե՛ս. գլ. 9. եր. 72 հա.):

Այսպէս ուրեմն, Խորենացին իւր ձեռի սակ ունեցած առնուազն երկու դրաւոր աղբիւրից, որ են Մար Արաս և «Չորս հագներգութիւնք», հիմնուելով Ս. Գրքի վերայ, աւելի կշիռ է տալիս երկրորդին՝ Հայկազանց թագաւորութեան պատմութիւնն անկիս: Ուստի և այդ պատմութեանն — որի մէջ մի երկու խօսք Պարոյրի համար է ասում և ընդարձակ ու երկար միայն Տիգրանի համար է գրում — «հիմունքը», հիմնական մասը վերջնում է «Չորս հագներգութիւնից», բայց օգտուում է երկրորդարար նաև Մար Արասից (Փառնու աղի համար, զուցէ և Զարհ, Արմոգ, Բագամ) և Վահագնի համար ժողովրդական երգից:

Միւս կողմից՝ մենք տեսնք, որ ԺԹ. զլսի մէջ «Հիւսումն Պիտոյից» կոչած գիրքն է աղբիւր զնում նոյն Հայկազանց թագաւորների և կամ Տիգրանի պատմութեան համար: Ինքն իրեն առաջ է գալիս այն միտքը, թէ միեւնոյն պատմութեան համար այս երկու տեղ յիշածները, «Հիւսումն Պիտոյից» և Չորս հագներգութիւնք, միեւնոյն աղբիւրն են: Երկու կոչումը, «Հիւսումն Պիտոյից» և «Չորս հագներգութիւնք», ոչ միայն իրար չեն բացասում, այլ լրացնում են մէկմէկու:

Ինչպիսի գրուածք է եղել այդ աղբիւրը, «հագներգութիւն» բառը, որ սովորաբար նշանակում է քերթուած, վիպասանութիւն և քերթուածի մասերը, և ապա նոր պատմական գրուածք ու անոր մասերը, կարող է

ցոյց տալ որ բանաստեղծական էր այդ գրուածքը: Հին բառով մի բանահիւսու թիւն, կամ ստեղծարանութիւն, որի համար իրրև նիւթ ծառայած էր Տիգրանի պատմութիւնը: Անուշտ, այդ «բանահիւսութիւնը» կամ «ստեղծարանութիւնը» իւր մէջ պիտի ունենար ինչպէս ամէն պատմական բանաստեղծութիւն, նաև շատ հատուածներ ու վիպական կամ թէ ծարտասանական մանրամասնութիւնների, որոնք բանաստեղծական երևակայութեան ստեղծագործութիւն են: Բայց ինչպէս ամեն պատմական բանաստեղծութեան, այդպէս և այդ «Չորս հագներգութեանց» էական մասը պէտք է պատմական լինել, և այդ էական մասն ահա Խորենացին տաել է և իրրև հիմունք դրել իւր Հայկազանց թագաւորների պատմութեան համար:

Միւս կողմից թէ Խորենացու «Հիւսումն վիտոյից» կոչած գիրքը նոյնպէս բանաստեղծական կամ բանահիւսական, ստեղծարանական գրուածք է եղել, այդ ցոյց է տալիս նոյն իսկ կոչումը, որ պատմագիրը տալիս է այդ գրուածքին: Յայտնի է, միջնագարեան զարոցներում «վիտոյք», յունական *ἱστορία*, բառով կոչում էին այն ծարտասանական կամ բանահիւսական վարժութիւնը, որով մի իմաստալից ասացուած ու խօսք կամ որեէ անձի պատմութիւն ու արարք ընդարձակու մ'ամեցնում էին այս կամ այն եղանակով ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ ծառ կամ բան: Այդ ծարտասանական վարժութիւնները իրենց կանոններով նոյն իսկ մեր գրականութեան սկիզբներում աշխատել են մտցնել մեր մէջ թարգմանիչները: Յայտնի է Խորենացուն վերագրուած «Պիտոյից գիրքը» որի մէջ բացի կանոնների բացատրութիւններից կան և օրինակներ «հրահանգիցն ազագաւ առ մանկունս»:

Այս գրքում ի միջի այլոց գտնում ենք «Սահման ներբողինի», որի տեսակին պատկանել է և Տիգրանի մասին գրուածքը: «Ներբողեան է բան արտադրական եղելոյ բարեաց ... Ներբողելի է զլէմն:

1 Մասնագրոչքիւն Մովսէսի Խորենացոյ, Վեմփի, 1865. եր. 413:

[անձնաւորութիւն] և զիրս և զժամանակս և զտեղիս... Զդէմս որպէս զՌիմոսթենէս կամ զՊղատոնս Զիրս որպէս զարգարութիւն կամ զողջախոհութիւն»... Այնուհետև բերած է նկատ՝ այսինքն պատմական անձնաւորութիւններ զովելու կանոնները մասերի բաժանելով ներբողեանը:

Եթէ փոքր ինչ ուշադրութիւն դարձնենք Խորենացու հայկազանց թագաւորների պատմութեանը (հարկաւ դուրս պէտք է ձգել Երեմիա մարգարէի վկայութիւնը՝ Մար Արաւից առած Փառնաւազի մասը և պատմագրի բացատրութիւնները թուելեաց երգերի մասին), կը տեսնենք, որ Տիգրանի վրայ զբրուած այսպիսի մի ներբողեանի բնաւորութիւն ունի այդ ամբողջ պատմութիւնը մինչև Աւահազն Ասել չի ուղղի որ քանի որ Խորենացին պատմութիւն է գրում և ոչ թէ ներբողեան մենք չենք կարող պահանջել որ նա իւր ճարտասանական աղբիւրը ծայրէ ի ծայր արտագրած լինի) — նա շատ տեղ կրճատում է և կամ ամեն բան իւր այբուբեր կարգով չէ բերած: Բայց եղածն էլ բաւական է մեր կարծիքը հաստատելու համար: Բաւական է միայն որ այդ պատմութիւնը բազմատենք Պիտոյից գրքի ներբողեանի կանոնների հետ:

Ահա այդ կանոններն իրենց կարգով ու բազմատեղութիւնը.

1. «Եւ ի զովելն պարտ և արժան է նախաշաւիղ առնել ըստ տեղոյ պատճառին»: Այսինքն նախ նիւթը, եթէ որեւէ անձն է, ուրեմն անձը զովել ընդհանրապէս: Եւ Խորենացին իւր հայկազանց և Տիգրանի պատմութիւնն սկսում է ընդհանուր զովեստով (Ա. իա. իբ. իգ. իդ):

2. «Ապա զնել զազգն և զնոյն բաժանել ի գաւառս և ի նախաձնողս և ի հարս»: Տիգրանի ներբողեանից Խորենացին կարիք չունէր «գաւառի» այսինքն Տիգրանի հայրենիքի հայաստանի զովքը մոցնելու իւր պատմութեան մէջ: Իսկ Տիգրանի նախաձնող հայկին և նորա մերձաւոր հայրերին՝ Պարոյրից սկսած՝ զիտենք զովելով յիշատակում է Տիգրանի պատմութիւնից առաջ:

3. «Ապա զանունն և բաժանել յուսումն և ի վարժս և յորէնս»: Այս մասի

մէջ պիտի պատմուէր ներբողելի անձի ծրնունքը սնուելը կրթութիւնը մանակական կեանքն ու վարմունքը (Հմտ. «Մովսէսի ներբողեանի» մէջ համապատասխան հատուածները՝ Ե թ. եր. 415 417): Ըստ ինքեան հասկանալի է, որ այս մասն իրրև պատմութեան համար «ոչ կարևոր» բան պիտի կրճատէր Խորենացին: Սակայն և այնպէս Տիրնգեան ինչպէս և նախընթացում յիշուած «գաւառի» հայրենիքի մասին գանում ենք Աժդահակի երազի մէջ:

4. Եւ ապա զմեծ գլուխ ներբողինն զընել զգործան և զնոյն բաժանել յամմն և ի մարմին և ի դիպուածս:

... «Զանձն յիմաստութիւն և յողջախոհութիւն, յարութիւն և յարդարութիւն»: Տեսնենք ինչպէս է գովում Խորենացին Տիգրանի «անձը» (ներքինը). Արանց կացեալ գլուխ արութիւն ցուցեալ՝ «պարկեշտն» օրինաւոր ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր մեծիմաստն արդարադատ հաւասարաւէր կշիռս ունելով և ին Աւրեմն ոչ մի գիծ պակաս չէ:

5. «Զմարմին» ի գեղեցկութիւն և ի զօրութիւն և յերազութիւն»: Խորենացի. «Խարտեաչս այս և աղէրեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրանս երեսօք զունեան և մեղուակրն անձնեայն և թիկնաւէան, առոյգարարձն և գեղեցկոտն»... «Կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ»: «Արժուանման սլացեալ թեօք... սքանչելի դիւցազն» «Բայց զովեմ զքաջահասակն զիմ և զնիզակաւորն և զամենեկն բոլոր անգամովք համեմատն և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի, քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ և ուժով ոչ զօք ունելով իւր զոյգ»: Աւրեմն զարձեալ ոչ մի գիծ պակաս չէ:

6. «Զդիպուածս» ի ծոխութիւն և յընչեղութիւն և ի սիրելիս»: Այսինքն զոված անձի կատարած մեծ դէպքը պէտք է ծոխութիւն և ընչեղութիւն պատճառէ և սիրելի դարձնէ նորան: Տիգրանի մեծ «դիպուածն» է Աժդահակի հետ կռուելն ու նորան յաղթելը, որ այսպէս է վերջացնում Խորենացին. «Եւ այսպիսի դիպուածս ի բարերախտութիւն յաւելեալ յաճախէր փառս Տիգրանայ»: Մեր թագաւորի «ծոխութեան» և «ընչեղու-

Թեան՝ մանրամասն նկարագիրն (Ա. իդ) աւելորդ ենք համարում արտադրել: Ընթերցողին ինքը կրտսնէ Մորենացու մէջ: Իսկ արեւելի լինելու համար բերենք միայն. Ամենեցուն՝ որ առ իւրովքն էին ժամանակօք նախանձելի և յեանոցս ըղձալի ինքն և ժամանակ: Ուրեմն դարձեալ ոչ մի գիծ պակաս է:

5. «Եւ ի վերայ այսոցիկ դնել զբարդատութիւնն յարագրութեամբ ներքողեցելուսն զմեծագոյնն ընդունել: Այսինքն ուրիշ նշանաւոր անձերի հետ բաղդատել զոված անձին և նորան աւելի մեծ համարել: Այդ բաղդատութիւնն ևս գտնում ենք Մորենացու մէջ Տիգրանի պատմութեան վերջում (Ա. լա):

6. «Եւ ապա զ՛ ի վերայ բանին՝ ի կատարման ըստ պատճառի»: Այսինքն ինչպէս ընդհանուր գովեստով սկսուած էր, այդպէս և ներքողելի անձի վրայ արած գովեստն ամփոփել և վերջացնել: Այսպէս էլ անում է Մորենացին: Այլ գլուխը, որ Տիգրանի պատմութեան վերջարանն է սկսում է Տիգրանին գովելով, և ինչպէս պիտոյից՝ կանոնները պահանջում են, վերջում բաղդատութիւն է անում շատ Տիգրանների մէջ և գտնում որ «մի է և միայնակ ի հայկազանցս» Տիգրանն էլն:

Այսպէս տեսնում ենք, որ Տիգրանի պատմութեան մէջ պահուած են «պիտոյից զբքի» ներքողեանի ճարտասանական կանոնները, այն էլ մեծ մասամբ նոյն կարգով: Ինչ կարգով որ պիտոյից գիրքն է պահանջում, նա այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ մեր պատմագիրը ԺԹ. գլխի մէջ պարզաբար յայտնում է թէ հայկազանց և Տիգրանի պատմութիւնը պիտի առնէ «ի հիւսման պատմութենէ պիտոյից»: Կը նշանակէ, եղել է մի պիտոյից գիրք, որի մէջ հիւսուած են եղել զանազան բանահիւսական կամ ճարտասանական օրինակներ, ի թիւս որոց և մի ընդարձակ ներքողեան հայոց թագաւոր Տիգրանի մասին: Այդ գիրքը հայոց մէջ հանրածանօթ է եղել:

Հանրածանօթ է եղել և նորա հեղինակը, ուստի և Մորենացին բաւականանում է զբքի անունը տալով միայն և զովելով նորա իմաստուն» հեղինակին և կոչելով նորան «արգասաւոր ի բանս»: Վերջին խօսքը ակնարկում է կամ այն բանին, որ զբքի հեղինակը շատ այդպիսի «բանք» կամ ներքողեաններ է գրած եղել, կամ շատ պերճարան քերթող է եղել:

Այսպէս մի կողմից «հաղներգութիւն» բառից իմանում ենք, որ Հայկազանց և Տիգրանի պատմութիւնը վերցրած է մի «բանահիւսական», «տեղծարանական» գրուածքից, իսկ միւս կողմից տեսնում ենք, որ Մորենացին նոյն պատմութիւնն իրօք վերցրած է մի «ի հիւսումն պիտոյից», կոչած գրուածքից: Այդ երկու աղբիւրը նայնանում են Պատահական մի բան չենք համարում և այն որ Ա. տեսակի ձեռագիրների մէջ փոխանակ «ի հիւսման պատմութենէ պիտոյից» գտնում ենք «ի հիւսման պատմութենէ բանից», որ կանոնաւոր ձևով է «ի պատմութենէ հիւսման ըմբից»: Արդ «հիւսումն բանից», մի բառով «բանահիւսութիւն» նշանակում է «բանաստեղծութիւն»: Թայանի է թէ ինչպէս Մորենացու բառերը յաճախ թարգմանուած են: Այսպէս և այստեղ «հիւսումն պիտոյից» թարգմանուած է «հիւսումն բանից», թարգմանողն հասկացել է թէ ինչ է անում: Ես գիտէ Մորենացու գրածի բուն իմաստը, որ այնպէս է թարգմանել, որ «ճարտասանական» աղբիւրը դարձած է մի «բանահիւսական», «բանաստեղծական» աղբիւր: Վերջին բառերս անշուշտ իրենց սկզբնական իմաստով իբրև «բան շինել» պէտք է հասկանալ, ինչպէս և պիտոյից կանոններով գրած ճառն նոյնպէս համարում է իբրև «բան հիւսել», «բան գործել»:

Ինչու Մորենացին այդ «բանաստեղծական» կամ ճարտասանական աղբիւրը «Չորս հագներգութիւն» է կոչում: Կամ այն պատճառով, որ այդ «արգասաւորն ի բանս» քերթողն իւր «պիտոյից հիւսումն» չորս հագներգութեան, չորս զբքի էր բաժանած, որոնցից մէկի մէջ էր Տիգրանի ներքողեանը, կամ աւելի այն պատճառով, որ Տիգրանի ներքողեանը չորս հագներգութեան, չորս մասի էր բաժանուում:

1. Թողնում ենք, որ հետաքրքիր ընթերցողն իմիջմանրամասնօրէն համեմատէ Հայկազանց, իսկապէս Տիգրանի պատմութիւնը՝ «պիտոյից գրքի» հիմնգետու գլխի հետ, «սանձան Սերտոյեանի», ևս հետում դրած օրինակի հետ՝ «Սերտոյեան Մովսէսի»:

Եթէ ուշադրութեամբ կարգանք Տիգրանի պատմութիւնը, կրանենէք, որ չորս մասի ևս բաժանուած է:

Առաջին: Այս մասի մէջ, որ վիպական հանգոյցն է, եղել են Տիգրանի գովեսան ու յաջողութիւնները: Գովեստի մէջ յիշատակուած են եղել ինչպէս սովորաբար լինում է քերթուածի մէջ և ինչպէս պահանջում են պիտոյից կանոնները Տիգրանի նախորդները Պարոյրից սկսած: Անշուշտ շատ բան ասած չէր լինի սոցա մասին, այլ գրքերից քաղած ու յարմարեցրած մի բան գուցէ սոսկ անուններ: Տիգրան թագաւորի ազգաբանութիւնը յայտնելու և հայոց թագաւորութեան սկիզբը ցոյց տալու համար: Այդ ընդհանուր գովեստից յետոյ պիտի գային Մարաց թագաւորի երկիւղն ու երազը խորհուրդը և որոշումը Տիգրանուհուն կնութեան առնել և թուղթը:

Երկրորդ: Այս մասի մէջ, որ զարգացում է, պատմուած է եղել պատդամաւորի գալը: Տիգրանի յօժարութիւնը իւր քրոջը տալու, նորան ձանապարհ գնելը և Աժդահակի նորան արած ընդունելութիւնը: Այս մասը Խորենացին շատ համառօտ է անցնում սկսելով. «Եւ առանց յերկարելոյ ասացից» խօսքերով: Համառօտելու պատճառը հասկանալի է: Բացի իւր բերած բովանդակութիւնից, ուրիշ առանձին պատմական դէպք չէ տեսնում: Կնանքից առած վիպական մանրամասնութիւնները նորան չեն հետաքրքրում: Օրինակ, Տիգրանի՝ իւր քրոջը ձանապարհ գնելու հաւաստեալ ընդարձակ նկարագրի համար նա բաւականանում է միայն ասելով «Յուզարկէ զքոյր իւր որպէս օրէն է թագաւորաց»:

Երրորդ: Այս մասը, որի մէջ զարգացումն իւր ծայրին է հասնում սկսում է, «Զկնի այսորիկ ասէ թէ»... խօսքերով, որից պարզ երևում է թէ նոր մաս է սկսում: Եւ բովանդակութիւնն էլ հենց նոր մաս է ցոյց տալի: Մարաց թագաւորն աշխատում է սիրելի դառնալ Տիգրանուհուն, նորա ձեռով թակարդ լարել Տիգրանի դէմ: Տիգրանուհին ստիպուած երեսանց ընդունում է նորա առաջարկը, բայց նենգութիւնը յայտնում է

եղբորը: Պատգամաւորութիւն է լինում և յայտնի թշնամութիւն սկսում:

Չորրորդ: Վիպական լուծումն է այս մասը: Երկու կողմից զօրաժողով են լինում և կռուի պատրաստութիւն տեսնում: Կռիւը երկարատևում է, որովհետև Տիգրան զելս իրացն հնարէր յարգարել, զի ապրելոյ ձար լիցի Տիգրանուհայ: Սա ազատում է: Ծախտամարտ: Տիգրան և Աժդահակ կուում են, բայց Խորենացին դժբախտաբար այդ կռուի մանրամասն նկարագիրը կրճատում է գրելով. «Եւ զի՛ երկայնեմ զբանս: Աժդահակ սպանում է, նորա տունն ու կինը գերում է: Ուրեմն չարը պատժուում է, իսկ բարին, Տիգրանն ու Տիգրանուհին վարձատրում են. մէկի փառքն է աւելանում: միւսն իւր եղբայրութեան համար «թագաւորապէս» ուղարկում է, քնակելու Տիգրանակերտում:

Ահա մի իսկ վիպական նիւթ, արժանի գեղարուեստական բանաստեղծութեամբ մշակուած լինելու, որի գեղեցկութիւնը Խորենացու համառօտած, և մասամբ անշնորհք կերպով կրճատած, գրութեան միջից ևս ցուում է, նիւթի և զործողութեան միութիւնը սկզբից մինչև վերջը պահած է և, որ գլխաւորն է, ամենայն բնականութեամբ բաժանում է միայն չորս «հագներգութեան»: Երկրորդ և երրորդ «հագներգութիւնների» սկզբին դրած Խորենացու խօսքերը. «Եւ առանց յերկարելոյ ասացից», «Զկնի այսորիկ ասէ թէ»... խօսքերը նոյն իսկ ցոյց են տալի մի մասից անցումը միւսին:

Եւ այս գեղեցիկ նիւթը, որ գեղեցիկ ևս մշակուած պիտի լինէր «ի բանս արգասաւորի և իմաստունի» ձեռով, իւր գեղեցկութեան մեծագոյն մասն, ժողովրդական երգից է ստանում: Հեղինակը իրենից չէ ստեղծել, այլ ժողովրդականն է առած և ճարտասանօրէն ու ստեղծարանօրէն մշակած:

Թէ Տիգրանի մասին երգեր եղել են «ի հինան մեր», տեսանք, այդ պարզապէս յայտնում է Խորենացին: Բայց նա չէ, ասում, որ այդ երգերն անձամբ է հաւաքել ժողովրդից: Այլ ընդհակառակն, նա իւր աղբիւրների ընդհանուր յիշատակութեան մէջ յայտնում է, որ իւր «հնագրութիւնը նաւաբում է» ու-

ըրշնեբից: Այդ իսկ պատճառով իւր պատմութեան սխալ կամ ուղիղ լինելը թողնում է առաջին «հաւարողներին»: «Իսկ ըստ որոց հաւարումն, Աստուծոյ լինել յայտնիս և մարդկան զովելիս կամ բասրելիս և մեր այնոցիկ օտար եւ բացակացեալ»: Ժողովրդից անձամբ ժողովողի լեզու չէ այս: Բացի այդ նա Տիգրանի մասին երգերն անցեալ ժամանակով է յիշում. «Զորմէ ասէին ի հինան մեր»: Այդ երգերը զրուում են հին սերնդի բերանին «ի հինան»<sup>1</sup>, Ուրեմն այդ երգերը թորենացին անձամբ չէ լսած ժողովրդից: Եւ քանի որ Տիգրանի պատմութիւնը մի զրաւոր աղբիւրից է առած, անհաւանական չէ կարծել որ այդ երգերի յիշատակութիւնն ևս իւր միակ զրաւոր աղբիւրի մէջ գտած պիտի լինի:

Մենք այնքան սովոր ենք այն մտքին, որ թորենացին ինքն է օգտուում ժողովրդական երգերից, որ սկզբում ըստ երևութիւն տարօրինակ կըթուի որ նա իւր յիշած երգերի համար զրաւոր աղբիւր ունեցած լինի Սակայն զարմանալի չէ այդ: Մեր պատմագիրն ամեն երգեր անձամբ չէ առած ժողովրդից: Թուելիաց կամ վիպասանաց երգերն անգամ թէպէտե ծանօթ են նորան և նոյն իսկ Սահակ Բագրատունուն<sup>2</sup>, նա ժողովրդից չէ լսած, թէ չէ՞ այդ երգերի մասին չէր գրիլ թէ պահեցին ակործելով որպէս լսեմ մարդիկ կողմանն... Գողթան» (Ա. Լ.): Կը նշանակէ այդ երգերի որեւէ ժողովածու է ծանօթ եղել թորենացուն, իսկ այդ հին երգերի պահուած լինելը Գողթն զաւառում՝ նա լսելով գիտէ: Այս ինկատի ունենալով նոր հասկանալի է լինում թէ ինչու նա Վահագնի երգի մասին այնպէս շեշտելով ասում է. «Զայս երգելով ոմանց բամբռամբ, լուաք իսկ ականջօք մերովք (Ա. Լ.): Այդ հարկաւ որ էր այդպէս շեշտելով յայտնել, որովհետեւ նա առաջ թիւ. գլխի մէջ ասել էր, որ ուրբշնեբի

«հաւարածներից», «ի գրոց» է օգտուելու: — և մինչև Վահագն այդպէս էլ արել էր: — իսկ այստեղ ինքն անձամբ է ժողովրդից աւնում:

Արդ, այդ երգերը բոլորը թորենացու ճաշակով անունն ու «փծուն» են եղել: Բացառութիւն չեն կազմել նոյն իսկ թուելիաց կամ վիպասանաց երգերը, քանի որ մեր պատմագիրն այս վերջիններն ևս ստիպուած է եղել «ճշմարտեալու», «ճշմարտապատմութիւն», շինելու: Ազոնք բոլորն առասպել են: Բայց ինչպէս տեսել ենք (Ա. գլ. եր. 22), հայ ժողովրդական բանահիւտութեան բոլոր նիւթերից միմիայն Տիգրանի մասին եղածներին առասպել կոչումը չէ տալիս: Այս բացառութիւնը, որի մասին իւր տեղում խօսել ենք, այժմ հասկանալի է լինում: Եթէ նա ինքը ձեռին ունեցած լինէր Տիգրանի մասին ժողովրդական երգերը և անմիջապէս այդ երգերից օգտուած լինէր, դժուար է կարծել, որ ամեն միւս տեղերում ժողովրդականն առասպել կոչէր, իսկ այստեղ ոչ: Ըստ թորենացու ուրեմն, Տիգրանի մասին եղածներն առասպել չեն (Տէս թորենացու հայեացքն առասպելի վրայ. գլ. 9. եր. 72 հան.), որովհետեւ Տիգրանի մասին նա ժողովրդական «փծուն» և «անոճ» երգերը չէ իւր ձեռի տակին ունեցած, այլ այդ երգերի իրեն թորենացու ճաշակով զրական մշակութիւն կրածը մի «զարգարեալ» և «ոճով և հանդերձ պատճառաւ շարագրած» պատմութիւն, որ նա այլ ևս առասպել կոչել չէր կարող: Այդ մի պատմութիւն էր, որ ոչ թէ առասպելի պէս «ճշմարտութիւն իրացն այլարանաբար յինքեան ունէր թագուցեալ», այլ ամբողջ արդէն «ճշմարտուած», «ոճով» պատմուած, առասպելական մասը գուրս ձգած և «ճշմարտապատմութիւն» շինած<sup>1</sup>: Ուրիշ խօսքով, զա «երգարան բանաւոր» էր:

Վերջին բառը մեզ յիշեցնում է Ա. գրքի

1. Հմեմ. Բ. դր. «իսկ ի յաւանել սրբոյն՝ օսմ նմա արքունն, որպէս անց ուրեմն ի հիւնսն արեւացիին Սուրասայ գնդիսնեղն»:

2. «Արտաշեսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի և ն ինչ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան» (Բ. խր.):

1. Ինչպէս յետոյ կրեսնենք, Տիգրանի կոխը վիշապ Ածղանակի դեմ վիշապաց մայր Անոյշի ու վիշապազանց գերուելն ու Մասիսի վրայ ընակուելն այդ աղբիւրի մեջ արդէն, բնեւս ժողովրդի քացատրութեան նեւեւելով, դարձած է կոխ ընդդեմ Մարաց քաղաւոր Ածղանակի, Մարաց քաղաւոր և մարացոց գերուելն, ճիշդ ինչպէս ինքը Խորենացին վիպասանէր «ճշմարտելով» վիշապ Արգաւանին դարձնում է Մարացոց սկր Արգան, եւ վիշապազանց դեմ կոխը Մարաց դեմ կոխը:

Գ. գլուխը. «Թագազս անիմաստասեր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց» կարելի չէ այս գլուխն իրրև փաստ մէջ բերել ինչպէս անուժ է շնորհ. Միաբան<sup>1</sup> հերքելու համար ըմբի կարծիքը թէ «հայկական աղբիւր» են եղել «Չորս հագներգութիւնքը» Այդ գլխի մէջ Մորենացին նախ գանգաւում է, որ մեր «առաջին թագաւորներն» ուշադրութիւն չեն դարձրել իրենց ժամանակի յիշատակի արժանի գործերը մատենագրել տալու. — մի բան որ բնաւ չէ մերժում որ Մորենացու ժամանակ լինէր «վերջնոց» գրած մի հայկական պատմական աղբիւր: Արդարեւ այնուհետեւ Մորենացին գանգաւում է. «Ռուպէս այժմ՝ և առ հինան հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանուորաց», և քիչ յետոյ աւելացնում է. «Միթէ մատեն մերձ կայցէ ինձ... կամ դպրութիւնք քոց հայրենեաց, որովք... ի վերուստ ի քեզ իջուցանեմ անսխալ: Բայց միթէ կարելի է այս խօսքերը տառացի ճշտութեամբ հասկանալ: Չէ՞ որ մեր պատմագիրն այնպիսի ժամանակում էր ապրում երբ հայ դպրութիւն կար արդէն և նա օգտուել էլ է այդ հայ դպրութիւնից: Անշուշտ չկար մի այնպիսի դպրութիւն, որով հեշտութեամբ կարելի լինէր ամբողջ հայոց պատմութիւնը անսխալ գրել սկզբից մինչեւ վերջը: Այս մասին է ահա՛ մեր պատմագրի գանգառը, ինչպէս և ոչ այնքան իւր ժամանակի ընդհանուր անսիրելութիւն իմաստութեան, է յանդիմանում նա՛ որքան «առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց», «առաջնոցն մերոց նախնեաց», «թագաւորացն մերոց և այլոցն առաջնոց» (Ա. գ. իս): Մորենացու այս խօսքերը երբեք չեն թելադրում մեզ կարծելու թէ նորա ժամանակի բոլոր հայերը իմաստութիւն և «բանաւոր երգարաններ», այսինքն իմաստալից երգարաններ (Տե՛ս այս բառի բացատրութիւնը գլ. Բ. եր. 34 հան.) չեն սիրել և թէ ինքը Մորենացին մենակ բացառութիւն է կազմել: Եւ ի՞նչպէս կարելի է կարծել այդպիսի բան՝ Ե. դարու գրական շարժումից յետոյ: Ազգի ընդհանրու-

թիւնը կարող էր «թուլամիտ» տգէտ ու «վայրենի» լինել՝ «փժուն» երգեր ու երգարաններ սիրել, բայց այդ չէ մերժում որ Մորենացու նման «իմաստուն» մի մարդ, քերթող մէկն «ի վերջնոցն», այդ փժուն երգերից օգտուելով, միացնելով անոնց հետ և իւր պատմական տեղեկութիւններն այս ու այն աղբիւրից քաղած, գրէր մի ճարտասանական բնաւորութիւն ունեցող պատմական բանահիւսութիւն: Եւ այդ է պատճառը, որ երբ մեր պատմագիրը որ ոչ փժուն աղբիւրների մեծ պակասութիւն ունէր, իւր ձեռի տակ ունենում է հայկազանց թագաւորների և Տիգրանի պատմութեան համար՝ իւր ճաշակով գրած մի պատմական աղբիւր այն ժամանակ իրաւամբ բառ չէ գտնում անոր յայտնի հեղինակին գովելու համար. «Արգասաւոր ի բանս և իմաստուն և ի մէջ իմաստնոցն իմաստուն»:

Այս աղբիւրից ահա՛ մեր պատմագիրը քաղում է իւր հայկազանց թագաւորների պատմութեան «հիմունքը» և առնում է Տիգրանի ամբողջ պատմութիւնը, այնքան ընդարձակ ճարտասանօրէն ու բանաստեղծաբար գրուած: Բայց որքան էլ նա ցանկանում է «որ յաղագս սորա էին գովեսաք և պատմութիւնք յերկարել», ստիպուած է կրճատելու և «առանց յերկարելոյ գրանս» ասել թէ չէ՛ պէտք կըլինէր ամբողջ չորս հագներգութիւններն էլ արտագրելու:

Ամփոփելնք մեր եզրակացութիւնը:

Մորենացին Տիգրանի պատմութիւնը Մար Աբասից չէ առնում: Եւ երկու տեղ յիշում է, որ այդ պատմութիւնն առնում է մի գրաւոր աղբիւրից, որի հեղինակի անունը, ծանօթ ենթադրելով, չէ տալիս, այլ բաւականանում է միայն նորան գովելով: Տիգրանի պատմութեան մէջ յիշած «ասէ», «ասէ որ պատմէն», «ասում է պատմողը» խօսքերը վերաբերում են այդ հեղինակին: Այդ գրուածքը որ Մորենացին կոչում է Հիւսուսեմ Պիտոյից՝ կամ պատմութիւն հիւսման Պիտոյից, եղել է մի բանահիւսական ու ճարտասանական գրուածք, հաւանօրէն չորս հագներգութեան՝ բաժանուած: Մորենացին անձամբ չէ օգտուած իւր յիշած ժողովրդա-

1. Խոր. Պատմ. Ուսումն. եր. 77:

կան երգերից, այլ իւր աղբիւրի հեղինակն է ճարասանօրէն մշակել ժողովրդական բանասանդճու թիւերը: Երգերի յիշատակութիւնը նա իւր աղբիւրից է առել:

Թէ իրօք պատմական երգերի վրայ է հիմնուած այդ պատմութիւնը, այդ աներկրայ ցոյց կտայ մեզ անոր բովանդակութեան ուսումնասիրութիւնը:

(Շարունակելու)

Մ. Արեղնան.

### Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Չինացիներն ինչ են ուտում և ինչով բոշիւում.— Չինացին, նա մանաւանդ շինացի չքաւորը, առանձին խորութիւն չի դնում ուտելիքների մէջ, ուտում է համարեա այն ամէնը, ինչ մարսել կարող է մարդու ստամոքսը: Այն բոլորը, որից երես կդարձնէր նոյն իսկ սովամահ լացարունին (աղքատ խալացի), շինացի հարուստը իբրև մի հազուագիւտ իր կընդունի:

Պանտոնում, օրինակի համար, ծախում են մսացու շներ, որոնց միսը կերակրի մէջ են գործածում: Կան խանութներ, որտեղ կատուի միս են վաճառում և վերջապէս նոյն իսկ մկան՝ միսը վաճառքի ընտիր նրւթ է: Մկան մսից պատրաստուած յայտնի կերակուրը (pary) Պանտոնի սիրելի կերակուրներից մէկն է: Կայսրութեան միւս նահանգներում այս կրծողների մսից եփուած կերակուրները ճաշարանների խորտիկների ցանկի մէջ քիչ են պատահում: Պեկինի շրջակայքում աւելի շատ է տարածուած ուղտի և իշի մսի գործածութիւնը, ուրիշ կենդանու միս, պէտք է ասել, դժուարութեամբ կարելի է ձեռք բերել: Տեղացի բնակիչները չեն զգուժում մինչև իսկ ստոկած ուղտի և կամ իշի միսը գործադրելուց: Չեմուլպոլում ճանապարհորդներից մէկը հանդիպում է մի խումբ շինացիների, որոնք նրա աչքի առաջ դուրս հանեցին գարշահոտ աղբակոյտից մի սասկած չուն և նրա մսից կերակուր պատրաստեցին: Մի ուրիշ անգամ նոյն այդ ճանապարհորդը ակնատես է լինում, թէ ինչպէս մի փոքրիկ գրւզի բնակիչներից շատերը թափուել էին մի մեծ խողի վրայ և պոկոտում էին նրա մազերը: Նրա տուած հարցին, թէ ինչու առաջ չեն հանում կենդանու փորտիքը և թէ այդ ինչ կապուած տեղեր են նկատում

նրա մարմնի վրան, պատասխան ստացաւ, որ փորտիքն ու աղիքներն էլ պիտի գործադրուին: Իսկ կապուած տեղերը ժանտախտի նշաններն են, որից ստակել է խողը:

Ամուն, ասում են, Չինաստանի միակ քաղաքն է, որտեղ կնոջ կաթն էլ են ծախում, որը գործառուում է ծերերի սպառուած ոյժերը վերականգնելու համար: Պոփի կաթ խմում են միայն հիւսիսային նահանգներում: Իսկ հարաւում խիստ արգելուած է: Գոնէ իր բնական հեղուկ դրութեամբ, Բոկ մակարդած կաթի, մածնի, որի պատրաստելու եղանակը եւրոպացիներից են սովորել, մեծ պահանջ կայ: Այդ թթուաշ մակարդը, ըստ երևոյթին, շատ է դիւր եկել շինացիներին, որոնք մեծ ասորժանքով, ինչպէս մենք մեզրը, ուտում են գրաւով և կամ հացով: Պանրից, որին շինացիները «փչացած կաթ» անունն են տալիս, զգուժում են, այն ինչ լակ ձուերը նորերից աւելի են գնահատում:

Kwan—Jen, այսինքն ծոփի հնդկական ծիծեռնակների բները (սալանդայ, Collocca liliasculents) և ծոփային լորձուները շինական իւրաքանչիւր հանդիսաւոր խնձորի անհրաժեշտ խորտիկներն են կազմում: Այդ ծիծեռնակները դեռ կիսամարս կերակուրը փոխում են ստամոքսից և այդ մածուցիկ զանգուածը գործ են դնում իրենց բները շինելիս, իբրև ընտիր շաղախ բոյսերի թելիկներն իրար հետ կպցնելու համար: Այս բների մեծ մասը ձեռք է բերում Մալակկա թերակղզու ավերից, նաև Չոնգիան և հարաւային հեռաւոր կղզիներից: Աչքի առաջ ունենալով, որ ծոփային ծիծեռնակներն իրենց բները շինում են սեպացած ժայռերի և խոր այրերի անմատչելի տեղերում, ուստի և այդ բների հաւաքելը ծանրախառութիւն է պահանջում, փտանդի ենթակայ լինելով ամէն մի վայրկիանում ձեռնարկողի կեանքը: Եւ հէնց այդ է պատճառը, որ շուկաներում գրանց շատ թանկ են գնահատում, այնպէս որ ամենալատ տեսակն անգամ աղքատ դասակարգին մատչելի չէ: Հարուստ շինացիներն այս ինքն ըստ ինքեան անհամ բներն ու լուրձուները իրենց իսկական գնից անհամեմատ աւելի են գնահատում միայն նրա համար, որ իբր թէ խիստ սնունդարար են:

Չինային մաքուր ու թարմ ջուր չի խմում, փնտասկար համարելով այն: Թագաւորական մեծ ճանապարհների այս ու այն կողմերում շինուած իջևաններում գնացող եկողներին եռցրած ջուր են տալիս, իսկ լորու ծաղիկներից պատրաստուած թէյը ծառայում է իբրև զովարար խմիչք, որը շինացի մարդասէրները սովորաբար բաժանում են մուրացկաններին:

Չինաստանում ամէն հիւանդութեան և մարմ-